ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«23» սեպտեմբերի 2022թ. N ՄՈ/542-2022

ք. Արմավիր

## ՄԻՔԱՅԵԼ ՎԱՆՅԱՆԻՆ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշման N1 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի զեկուցագիրը.

*որոշում եմ՝*

1. 2022 թվականի սեպտեմբերի 23-ից «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Միքայել Վանյանին՝ մինչև վեց ամիս ժամկետով:
2. «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Միքայել Վանյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել 435000 (չորս հարյուր երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Յուրաքանչյուր ամսվա լրավճար սահմանել տվյալ ամսվա վճարովի ծառայություններից ստացված դրամական ընդհանուր մուտքերի 1 տոկոսի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 23.09.2022 17:51:00 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505